

ԳԻՒՂԱԿԱՆ ՎԱՐԿԸ

ՌՈՒԾԻԱՅՈՒՄ ԵՒ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ:

(Յօդաած առաջին)

ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ

Առաջուց յայտնենք, որ մեր այս յօդաածի նպատակն է Ռուսիայի գիւղական վարկի զարգացման պատմութեան մի ընդհանուր տեսութիւնը տալ. իսկ ապա մենք կը դիմենք գիւղական վարկի կարեւորութեան խնդրին մեր երկրում, աչքի առաջ ունենալով մեր գիւղացիների նորագոյն տնտեսական կեանքի պահանջները:

Գիւղական վարկի խնդիրը թէ՛ ռուսաց և թէ՛ եւրոպական մասնագիտական գրականութեան մէջ արդէն լուծւել է և գործնականապէս իրագործւել է մինչ այն աստիճան, որ թէ՛ արեւմտեան Եւրոպայում և թէ՛ Ռուսիայում գիւղական վարկի հիմնարկութիւնների կարեւորութեան մասին այլ ևս չեն վիճում: Գիւղացիները յիշեալ երկիրներում, իրանց յայտնի պիտոյքներին բաւարարութիւն տալու համար, ունին հաստատութիւններ, որոնց նոքա պիմում են հարկաւոր դէպքերում՝ վարկ (кредитъ) ստանալու համար: Բայց, չը նայած որ խնդրի այդ կողմը վճռած կարելի է համարել, այնու ամենայնիւ այնտեղ ևս մասնուլը և գիտութիւնը իրանց կողմից տակաւին խիստ զբաղւած են այդ վարկի խնդրով. սակայն միայն գլխաւորապէս այն տեսակէտից թէ՛ ի՞նչպիսի ձև եր պիտի տալ գիւղական վարկին, որ նոքա համապատասխանէին երկրի ժամանակակից գիւղատնտեսական և առհասարակ տնտեսական նոր պայմաններին: Եւ իրաւ, այժմ այդ պայմանները այն չեն, ինչ առաջ էին, և գիւղական պահանջները նոյնպէս ընդարձակւել են, որպէս և հասարակական շատ ուրիշ պի-

տոյքներ: Ահա այդ ընդարձակած պահանջները, որոնք հասարակական նորագոյն պայմանների ծնունդ են, դրդել են գիւղացիներին դէպի աւելի մեծ արդիւնաբերութիւն: Հանգամանքները այնպէս են փոխել, որ հողատէրը կամ հողագործը, պարտքի մէջ չը խրելու համար, ստիպւած են միջոցների դիմել, որ միեւնոյն հողից աւելի արդիւնք ստանան, քան առաջ ստանում էին: Իսկ դորա համար ստիպւած են նոքա հողի մշակութեան ձևը փոխել՝ մտցնելով նոր, աւելի պատշաճաւոր, աւելի արդիւնք խոստացող մշակութեան ձևեր կամ մշակութեան սիստեմ, որ և կազմում է, այսպէս կոչւած, խիտ մշակութեան սիստեմը (интензивная культура, intensive Wirthschaft): Բայց խիտ մշակութիւնը կամ արդիւնաբերութիւնը պահանջում է և աւելի մեծ փող, որ միշտ չի ճարուում նոցա մօտ, օւմ նա հարկաւոր է. և ահա թէ ինչո՞ւ գիւղական վարկը դառել է մի անհրաժեշտութիւն և ահա թէ ինչո՞ւ գիւղական վարկը արդէն իւր կազմակերպութիւնը ստացած է արեւմտեան Եւրոպայում և Ռուսիայում: Յիշեալ երկիրներում այժմ, ինչպէս ասացինք, զբաղւած են գիւղական վարկի ձևերի փոփոխման խնդրով ժամանակակից պահանջների համեմատ, մինչդեռ մեզանում գիւղական վարկի խնդիրը նոր է արթնացել և սորա անհրաժեշտութեան գիտակցութիւնը դեռ չէ թափանցել գիւղական շրջանները, մասամբ շնորհիւ այն հանգամանքի, որ երկրիս մամուլը քիչ է իրան նւիրել տնտեսական-ժողովրդական հանգամանքների ուսումնասիրութեան:

Բայց քանի որ մեզանում կազմակերպւած գիւղական վարկի հաստատութիւններ չը կան և քանի որ այդ հաստատութիւնները մեզ մօտ պիտի ազդէին ռուսաց օրէնսդրութեամբ, հարկ կայ ուրեմն, գէթ ընդհանուր գծերով ծանօթանալ Ռուսիայի գիւղական վարկի պատմութեան հետ: Դորանից էլ կը օկսենք:

Գիւղական վարկը Ռուսիայում ստացել է իւր սկիզբը գիւղացիների ձօրտուութեան վերացման օրէնքից, որ տւած է 19 փետր. 1861 թ.: Հէնց այդ օրը գիւղացիները ձեռք բերին քաղաքացիական բոլոր իրաւունքները, դառնալով վերջապէս ինքնուրոյն գործողներ և պատասխանատու իրանց գործերի համար թէ՛ մասնաւոր և թէ՛ հասարակական կեանքում: Նոյն օրը, գիւղացիները, համաձայն 19 փետր-

ւարի տւած օրէնքի, ստացան մշտապէս օգտուելու իրաւունք այն հողերից, որ մինչ այդ ժամանակ մշակուած էին գիւղացիներից ժամանակաւորապէս և այն էլ, ինչպէս յայտնի է, մեծ մասամբ յօգուտ հողատէրերի, ստանալով իրանց դառն աշխատանքի արդիւնքից միմիայն մի որոշ չնչին մասն իրանց գոյութեան համար: Իսկ 19 փետրւարի օրէնքի զօրութեամբ գիւղացիների աշխատանքի արդիւնքը պիտի մնար իրանց, վարձատրելով հողատէրերին օրէնքով որոշուած տուրքերով: Այս գիւղական վերանորոգութիւնը ապացոյց էր, որ տէրութիւնը լրջօրէն ցանկանում էր գիւղացիներին դարաւոր ծանր լուծից իրօք ազատել և յետոյ գիւղական հողային սեպհականութեան գործի զարգացման խնդիրը առաջ մղել: Փետրւարի 19-ին տւած օրէնքի հետ զուգահեռաբար լոյս տեսաւ մի ուրիշ օրէնք, որի անունն էր հողեր չեւո գնելու օրէնք (Положение о выкупе, Ablösungsgesetz) և որի նպատակն էր գիւղացիներին հողի սեպհականութեան տէր դարձնել: Եւ ահա՛ թէ ինչպէս տէրութիւնը ուզեց օղնել գիւղացիներին, որ սոքա կարողանան հողատէր դառնալ: Զէոր գիւղացիները միջոց՝ չունէին, որ կարողանային օգտուել հողեր չեւո գնելու օրէնքից: Համաձայն նոյն իսկ այդ օրէնքի, պետութիւնը փոխ է տալիս գիւղացիներին մի յայտնի դումար, որով վերջինները չեւո են առնում հողատէրերից սոցա կալւածների այն մասերը, որ տւած էին գիւղացիներին մշտապէս օգտուելու, համաձայն ճորտութեան վերացման վերը չիշած օրէնքի՝ 19 փետրւարի 1861 թ.: Պետութիւնից գիւղացիների ստացած դումարների դրաւականը կազմում էին նոյն իսկ այդ առնուելիք կալւածների մասերը: Գիւղացիները վերադարձնում են ստացած դումարները պետութեան մաս առ մաս, երկայն ժամանակամիջոցներում: Մենք աւելորդ ենք համարում այս օրէնքի մանրամասնութիւնների մէջ մտնել, որովհետեւ դա կը հեռացնէր մեզ մեր աշխատանքի իսկական նպատակից: Մեզ հարկաւոր էր առաջ բերել այն անհերքելի ապացոյցը, որ չիշեալ օրէնքի դործնական իրադործումն ոչ այլ ինչ էր, եթէ ոչ գիւղական հողային վարկի իրադործման առաջին քայլը: Սրանով բացւեց գիւղացիների համար դործունէութեան մի նոր ասպարէզ, ուր նոքա պիտի հանդիպէին այնպիսի անտեսական պայմանների, որոնց մասին գիւղացիները գաղափար անգամ չունէին՝ շնորհիւ իրենց ամեն

ևռանդ մեռցնող նախկին տնտեսական նահապետական կեանքի:

Բանը սա է, որ ճորտութեան ժամանակ, ուրեմն մինչ 1861 թ., հողատիրութիւնը ու հողագործութիւնը իրար հետ սերտ կապւած էին, որովհետեւ հողատէրը միեւնոյն ժամանակ և հողագործ էր այս մտքով, որ, թէպէտ և հողագործական աշխատանքները կըրում էին ճորտերը, այդ ճորտ-գիւղացիները իսկապէս ոչ այլ ինչ էին, եթէ ոչ հողատիրոջ մշակները, բանւորները. այնպէս որ հողերի արդիւնքը պատկանում էր հողատիրոջ, իսկ ճորտերին տրուում էր արդիւնքի մի մասը, որով նոքա ապրել կարողանային: Հողատէրը տէր էր նաեւ իւր հողերի մշակութեան, տէր էր հողագործութեան: Բայց 19 փետրւարի 1861 թ. տւած օրէնքի զօրութեամբ, որով գիւղացիները ազատութիւն ստացան, հողատէրերը կարող էին աւելի հեշտութեամբ իրանց հողերը ծախել, գրաւ դնել և կապալով տալ: Այդպիսով հողը, որ առաջ անշարժ մի սեպհականութիւն էր, դառաւ ապրանքի նման շարժական սեպհականութիւն, նա դառաւ առեւտուրի առարկայ: Հողատէրը սկսեց նայել իւր հողի վերայ, որպէս մի առարկայի վերայ, որ իւր առանձին զինն ունի ինչպէս մի արժէթուղթ, որը նմանապէս կարող է ծախել, գրաւ դնել: Իսկական հողագործը կարող էր մէկը լինել, հողատէրը՝ մի ուրիշը. հողատէրը իրաւունք չունի խառնել կապալառուի տնտեսութեան մէջ, ուրեմն հողատէրը կարող էր և հողագործ չը լինել: Այսպիսով այն երկու բաները, որ առաջ իրարից անբաժան էին՝ հողատիրութիւնը և հողագործութիւնը, այժմ բաժանւեցին մէկը միւսից և դարձան առանձին ինքնուրոյն տնտեսական միութիւններ: Բնական է, որ այդ երկու ինքնուրոյն տնտեսական միութիւնները իրանց զոյութեան համար տարբեր պահանջներ էին երեւան հանում, այնպէս որ սոցա բաւարարութիւն տալու համար միջոցները նմանապէս պիտի տարբերէին: Եւ վարկն էլ, նկարագրած իրերի փոփոխման զօրութեամբ, պիտի անշուշտ բաժանէր: Մէկը դառնար բուն հողագործական, միւսը՝ հողատիրական: Վարկը առաջ միմիայն հողատիրական լինելով, 19 փետրւարի վերանորոգիչ օրէնքի երեւալուց յետոյ, ստանում է մի ուրիշ ձև ևս, որը կոչումն ունի միմիայն երկրագործութեան պէտքերին ծառայելու:

Գիւղական հողային վարկի մինչ այդ աստիճան զարգացման

Հետ միասին զարգանում էին միեւնոյն ժամանակ տնտեսական նոր պայմաններ, որոնք տնտեսական կեանքի բարեօրբան համար զգալի հետեւանքներ ունէին: Եւ այդ պայմանների երեւոյն աջակցում էին թէ՛ երկաթուղիների կառուցումը, որը մեծ զարկ էր տալիս արդիւնաբերութեան ընդլայնման և թէ՛ դատաստանական վերանորոգութիւնը, որը կեանքի մէջ նոր իրաւական յարաբերութիւններ մտցրեց ¹⁾: Այդպիսի հանգամանքներում ապրում էին գիւղացիները, և իրանց նորաձեւ տնտեսութեան պիտոյքները հոգալ անկարող էին:

Գիւղացիները ունէին միայն գռեհիկ և կոպիտ աշխատանք, որ ժառանգած էին իրանց նախկին նահապետական կեանքից և որը զուրկ էր բոլոր ընդունակութիւնից ժամանակի պահանջներին համապատասխանելու: Բաւական չէր գիւղացիներին սեպհականատէր դարձնելու համար միմիայն իրաւունք տալ, այլ հարկաւոր էր նմանապէս նոցա տնային-կենսական և գիւղատնտեսական պիտոյքների լրացման գործը առաջ մղել: Գիւղացիների այս կարգի պահանջները հետզհետէ բազմանում էին, երբ որ խելացի տնտեսութիւնը արդէն ստիպողական էր դառնում, մանաւանդ երբ համոզւեցին, որ խելացի եղանակներով արդիւնաբերելը կարող էր հեշտացնել, որ գիւղացիները աջողակ կերպով մրցեն այն ասպարիզում, ուր նոցա հրաւիրում էին արդիւնաբերութեան և վաճառականութեան նոր պայմանները: Մի ասպարէզ, որի համար, բացի աշխատանքից և հողից, պահանջւում էր գիւղացիներից գիտութիւն և մանաւանդ կապիտալ, այսինքն այն, ինչ նոցա բոլորովին պակասում էր: Ուրեմն ի՞նչ պիտի անէին գիւղացիները, որպէս զի նոքա փրկէին այն անկումից, որը սպառնում էր նորանց այնքան դժարութեամբ ձեռք բերած հասարակական տնտեսական դիրքին: Որովհետեւ ի՞նչ օգուտ այն իրաւունքներից, որոնցից չը պիտի կարողանային օգտուել, նա մանաւանդ որ, ճորտութեան վերացումից յետոյ, գիւղացիները կորցրին իրանց նախկին խնամատարներին, յանձին նախկին հողատէրերի, իբրեւ ազատներ, իրանց բոլոր հոգսերը իրանք պիտի քաշէին: Միւս կողմից գիւղական հողը, որը զտնւում էր յետ գնւելու պրօցեսի մէջ, համարեա

¹⁾ Եւ որի հետ «Մուրճ»-ը իւր ընթերցողներին առաջին խնդիրից սկսել է ծանօթացնել «Դատաստանական վերանորոգութիւն» վերնագիրը կրող չօղւածով:

թէ ոչինչ ապահովութիւն չէր ներկայացնում, որպէս զի գիւղացիները զոնէ փոխառութիւնների դիմէին իրենց անյետաձգելի կարիքների համար: Գիւղական հողը, այդ գիւղատնտեսական ամենադժնասէր տարրերից մինն՝ կարծես կորցրել էր իր միակ նշանաւոր յատկութիւնը, այն է արժէքը, շնորհիւ ի հարկէ մասամբ հողագործութեան անարդիւնաւէտութեան. բայց դա ունէր և մի ուրիշ պատճառ, այն է, որ 70-ական թւականներին կապիտալները ձգտում էին դէպի աւելի շահաւէտ ձեռնարկութիւններ:

Կապիտալները մոտան երկաթուղական և գործարանական ձեռնարկութիւնների մէջ, որոնք հէնց այդ ժամանակ տենդային արագութեամբ զարգանում էին: Հողագործութիւնը, այսպէս ասած, մոռացած էր: Մի կողմից գիւղական վարկի հաստատութիւնների բացակայութիւնը և միւս կողմից կապիտալների հողից հեռանալն դէպի երկաթուղիները և գործարանները—այս երկու հանգամանքները զգել էին գիւղացիներին այն անելանելի դրութեան մէջ, որը մի փոքր նմանեցնում էր ճորտութեան վերացումից առաջ եղած նոցա հասարակական-տնտեսական դրութեան: Բայց որպէս զի այդ դրութիւնը ծայրայեղ հետեւանքների չը հասնի, տէրութիւնը առայժմ անկարող լինելով բուն հողագործութեան օգնել, սկսել էր օգնել գիւղացիներին, որ սոքա զոնէ սերմեր ձեռք բերեն և իրանց ուրիշ կենսական պիտոյքներին բաւարարութիւն տալ կարողանան: Նա այդ անում էր վարկ տալով գիւղացիներին: Բայց այս տեսակ գիւղական վարկը ունէր միմիայն ժամանակաւոր և օժանդակիչ նշանակութիւն և նա տրւում էր գիւղացիներին քամբաղղութեան դէպքերում և ահա թէ ինչո՞ւ նա կրում է գրականութեան մէջ ընդհանրապէս «ոգորմուկութեան վարկի» անուն (кредитъ изъ милости, Mildthätigkeitskredit). Հէնց այդ ժամանակ ծագում է վարկի այն տեսակը, որը փոխանակ գիւղական տնտեսութեան օգնելու, սորա կատարեալ խանգարման էր նպաստում: Տնտեսական գիտութիւնը վաղուց ի վեր տւել է սոյն վարկին իրաւամբ վաշխառական վարկի անունը (Ростовщическій кредитъ, Wucherkredit): Այսպիսի վարկ ստանալու համար, գիւղացիները դիմում են կամ խոշոր և հարուստ հողատէրերին, որոնք, ձեւանալով իբր թէ պահպանում են գիւղացիների հետ հարեանի յարաբերութիւններ, տալիս են վեր-

ջիններին պահանջած վարկ, կամ դիմում են մասնաւոր փողատէր մարդկանց, որոնք, շրջելով գիւղից գիւղ՝ նպատակ ունին գտնել փողի կարօտ գիւղացիներ և, ի հարկին, վարկ տալ սոցա. բայց այդ վարկը տրւում էր այնպիսի ծանր պայմաններով, որ ամենատնտես և տոկոսն գիւղական աշխատանքով իսկ հազիւ թէ գիւղացին կարողանում էր իւր ջանձն առած պայմանները կատարել: Այդ պայմաններից ամենածանրն է բարձր տոկոսը, որ տալիս են գիւղացիները վաշխառուներին: Վաշխառուական տոկոսները հասնում են 20% մինչ 40% և աւելի տոկոսների, որոնք սովորաբար, բացի չոր հացից, գիւղացիներին ուրիշ համարեա ոչինչ չեն թողնում: Շատ յաճախ պատահում է և այնպէս, որ գիւղացիները, չը կարողանալով իւր ժամանակին վճարել տոկոսները, բոլորովին զրկւում են իրանց հողի սեպահականութիւնից: Վերջապէս գիւղական վարկի օրինաւոր հաստատութիւնների բացակայութիւնից ծաղում է այն տեսակի մասնաւոր վարկը, որ գիւղացիները ստիպւած իրարու փոխադարձաբար տալիս են, շնորհիւ իրանց պահանջների և ինտերեսների համերաշխութեան: Այս վարկը, որ կոչւում է ստիպեալ փոխադարձ վարկ՝ (вынужденный кредит, Zwangskredit) արտայայտւում է օրինակ հետեւեալ ձևերով:—Մէկ գիւղացի միւսին փոխատուութիւն է անում, որպէս զի փոխ առնողը մի երրորդ գիւղացուց սերմեր կամ նման պիտոցներ ձեռք բերէ, կամ գոնէ դորա բեհը տալ: Ստիպւած վարկի երկրորդ ձևը այն է, երբ գիւղացիները իրար կապալով հողեր են տալիս մշակելու համար (այսպէս կոչւած сельская аренда, գիւղական կապալ). վերջապէս ստիպւած վարկ է կոչւում նաև, երբ գիւղացիները փոխադարձաբար հում նիւթեր են մատակարարում տնային արդիւնաբերութեան համար:

Թէ՛ վաշխառուական և թէ՛ ստիպւած վարկի ձևերով գիւղացիներից վերցրած պարտքը, ինչպէս հաշւում են, կազմում է եղել Ռուսիայում 70-ական թւականներին մօտ մի միլլեարդ (հազար միլլիոն) ռուբլի, ի հարկէ բացի այն պարտքից, որ գիւղացիները արել էին հողեր յետ գնելու համար: Յիշած վարկերի գումարը ցոյց է տալիս թէ՛ գիւղական վարկի օրինաւոր հաստատութիւնները ո՛րքան նպաստած կը լինէին գիւղացիների բարոյական և տնտեսական բարելաւութեան, եթէ նոքա այդ ժամանակ գոյութիւն ունենային:

Գիւղական վարկի մինչ այդ աստիճան վատթար դրութիւնը, նպաստելով գիւղացիների տնտեսութեան քայքայման, ներկայացնում էր մի յուսահատիչ հասարակական ախտ, որը անուշադիր չը պիտի անցնէր թէ՛ տէրութեան և թէ՛ այն գործող մարդկանց աչքում, որոնք անկասկած մեծ ծառայութիւն էին արած 1861 թ. ճորտութեան վերացման գործին։ Գիւղացիները չէին կարողանում 1861 թ. օրէնսդրութիւնից առաջ եկած տնտեսական պայմաններում գործել առանց նիւթական օգնութեան, որ ընդունակ էր հասցնել միայն կանոնաւորած գիւղական վարկը։ Ահա՛ մի մեծ խնդիր, որի լուծումն տէրութիւնը պիտի իւր ձեռքն առնէր, քանի որ այն գործի իրագործումը մասնաւոր ոյժերից վեր է։ Գրականութիւնը իւր կողմից հեշտացրել էր այդ գործը, որովհետեւ նա սկսել էր իւր ուշքը դարձնել գիւղի վերայ և ուսումնասիրել գիւղական կեանքի նոր պայմանները և կարողացել էր շատ նիւթեր ժողովել գիւղական-ժողովրդական վարկի վերաբերեալ։

Տնտեսական կեանքի նոր պայմաններից ծագում էին գիւղական նոր պիտոյքներ, որոնք գիւղացիների համար մասամբ անձնական և մասամբ էլ զուտ գիւղատնտեսական բնաւորութիւն էին կրթում։ Այս երկու տեսակ՝ անձնական և գիւղատնտեսական վարկի պահանջներին համապատասխան հաստատութիւններ բանալու համար, տէրութիւնը բացեց 21 մարտի 1869 թ. գիւղական բանկերը, որոնք փոխատու-խնայողական ընկերութիւններ էին իսկական տիպն են ներկայացնում (ссудо-сберегательные товарищества, gegenseitige Vorschussvereine)։ Փոխատու-խնայողական ընկերութիւնների կազմակերպութեան գլխաւոր հիմունքները հետեւեալներն են։ Ընկերութեան անդամների ընդունելութիւնը կատարւում է ընտրութեամբ. իւրաքանչիւր անդամ հաւասար իրաւունք ունի ընկերութիւնից վարկ վերցնելու. բոլոր անդամները միասին պատասխանատու են ընկերութեան առջև իւրաքանչիւրի համար, որ վերջինը իր պարտաւորութիւնները կը կատարի, այսինքն կանոնադրութեամբ որոշած ժամանակին վարկի տոկոսները կը վճարի և գումարն էլ կանոնաւոր կերպով կը վերադարձնի ընկերութեան։ Պէտք է յիշել ընկերութեան մի ոչ աննշան սկզբունքի մասին ևս. դա այն է, որ ընկերութեան զուտ արդիւնքից կազմւում են յօգուտ անդամների՝ բաժիններ (пай, Gewinnantheile)։

Այս համառօտ նկարագրութիւնից հետեւում է, որ փոխատու-
 ինայողական ընկերութիւնների հիմնելը գիւղական վարկի մի նոր
 ձեւը ստեղծեց, որ իւր կազմակերպութեամբ համապատասխանում է
 գիւղացիների տնտեսական նոր դիրքին: Թէ մինչ ո՛ր աստիճան գիւ-
 ղական վարկի նկարագրած այդ նոր ձեւը գործնականապէս նշանա-
 կութիւն ունեցաւ, այդ կարող են հաստատել միայն թւերը, որոնք
 անհերքելի են: Փոխատու-ինայողական ընկերութիւնների քանակու-
 թիւնը Ռուսիայում հասնում էր 1872 թւին մօտ 60-ի. այս թւա-
 կանից մինչ 1875 թ. նոցա թիւը բարձրանում է մինչ 282-ի, իսկ
 1875-ից մինչ 1878 թ. փոխատու-ինայողական ընկերութիւնները այն-
 քան աճում են, որ դոցա քանակութիւնը աւելի քան եռապատու-
 ւում է՝ հասնելով 966-ի: Ինչ վերաբերում է ընկերութիւնների
 գործունէութեան արդիւնքներին, այդ կարող են ցոյց տալ 1884
 թւականին արած հաշիւները 752 գիւղական փոխատու-ինայողական
 ընկերութիւնների համար. այդ հաշիւներից երեւում է, որ այդ ըն-
 կերութիւնների անդամների թիւը հասնում է եղել 205,000-ի,
 որոնց տրւած է եղել մօտ 25 միլլիօն ռուբլու վարկ:

Սակայն գիւղական վարկի այս հաստատութիւնների թիւը
 սկսում է հէնց 1884 թւականից աւելի քիչ աճել: Այսպէս, 1877 թ.
 նոր հիմնւեցին 57 և 1878 թ. 156 այդ ձեւի ընկերութիւններ.
 բայց 1884—86 թւականները այդ ընկերութիւնների տարեկան
 աճման թիւը հասնում է մինչ 25-ի: Եթէ ուզենային փոխատու-ինա-
 յողական ընկերութիւնների աճման նւազումը վերագրել նոցա անօգ-
 տակարութեան կամ անժամանակակից դառնալուն, դա կը լինէր ան-
 կասկած սխալ և անհիմն կարծիք: Փոխատու-ինայողական ընկերու-
 թիւնների թւի աճման նւազելու սկզբնապատճառը պիտի անշուշտ
 որոնել մի այլ հանդամանքի մէջ: Դիւղացիները այդ ժամա-
 նակ սկսել էին ձգտել՝ իրանց սեպհական հողերի
 սահմանները ընդարձակելու: Այս երևոյթը զարմացմամբ
 նկատեց թէ՛ գրականութեան և թէ՛ ղեմստութիւնների (նահանգական
 դատակարգային վարչութիւնների) կողմից միայն այն ժամանակ, երբ որ
 գիւղացիները արդէն ձեռք էին բերել մի քանի միլլիօն դեսետին.
 հող՝ առանց որ և իցէ վարկի հիմնարկութեան միջնորդութեան, այլ
 այն մասնաւոր ծածուկ միջոցներին դիմելով, որոնց կործանիչ հե-

տեանքների մասին մենք վերը մասամբ ցիշել ենք: Բայց և այնպէս, գիւղացիների այդ ձգտումը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ համոզիչ նշան, որ գիւղացիները գիտակցաբար սկսել էին իրանց տնտեսական գործունէութիւնը ընդարձակել: Այդպէս հասկացան ռուսաց զեմստվոները, որոնք ներկայումս ամենակենդանի և հաւատարիմ պաշտպաններն են նահանգական տնտեսական բարդաւաճման, մանաւանդ գիւրազգաց դէպի ամեն բան, ինչ գիւղացիներին է վերաբերում: Դոքա, այդ զեմստվոները, ջանացին պահպանել գիւղացիների այդ շարժումը, յատկացնելով մեծ գումարներ վարկի հիմնարկութիւններ բանալու, որոնք պիտի նպաստէին գիւղացիների հողի սեպհականութեան ընդարձակելու գործին: Ուրեմն գիւղացիների համար վարկը ստանում է այժմ այն բնաւորութիւնը, որը ոչինչ նմանութիւն չունի նախկին փոխատու-խնայողական ընկերութիւնների հետ: Փոխատու-խնայողական ընկերութիւնները պաշտօն ունէին գիւղացիների գիւղատնտեսական և անձնական կարիքներին ծառայելու. և այս գործին աջակցելու դերը, պէտք է ասած, յաջողութեամբ են կատարում: Մինչ այսօր էլ գիւղական վարկի այդ հիմնարկութիւնները գործում են առանց խոչընդոտի և առանց դուրս գալու իրանց բուն պաշտօնից: Դոքա նոյն շաւղով շարունակում են գործել և այժմ, կը գործեն դեռ ևս ասպագայում, որովհետեւ այս կարգի կարիքներ գիւղացիները միշտ ունենալու են, ինչ ձև և մեծութիւն էլ ստանար գիւղական հողային սեպհականութիւնը ժամանակի ընթացքում: Բայց աչքի առաջ ունենալով փոխատու-խնայողական ընկերութիւնների գործունէութեան նպատակը, պէտք է խոստովանել, որ դոքա անընդունակ երեւցան գիւղացիների հողեր գնելու պահանջներին բաւարարութիւն տալու: Եւ որպէս մենք ասացինք, գիւղացիների այդ պահանջը շատ զգալի կերպով երեւաց այս վերջին տարիներում: Ահա թէ ինչո՞ւ փոխատու-խնայողական ընկերութիւնները, որոնք գիւղացիների այդ կարիքին բաւականութիւն տալ չը կարողացան, այս վերջին տարիներում աւելի քիչ աճեցին իրանց թւով: Այժմս պահանջ երեւաց կազմակերպել մի այնպիսի վարկ, որը օգնէր գիւղացիներին իրանց հողային սեպհականութիւնները ընդարձակելու: Սորանից ծագում էր մի նոր գիւղական հողային վարկի խնդիր, որը պետութեան համար ընդ-

Հանուր նշանակութիւն ստացաւ թէ՛ գիւղական տնտեսութեան բարելաւութեան և թէ՛ առհասարակ հողատիրութեան յաջող բաժանման տեսակէտից: Պետութիւնը լաւ լըմբոնելով այդ դրութիւնը և այդ դրութեան համապատասխան վարկի պահասութիւնից անմիջապէս բղխող անմիջեմար հետեւանքները երկրի տնտեսութեան համար, շտապեց մայիսի 18-ին 1882 թ. հրատարակել մի օրէնք, որի հիման վերայ բացւեց գիւղացիական ¹⁾ հողային վարկի բանկը (крестьянский поземельный банк): Գիւղացիական հողային վարկի բանկը նպատակ ունի հեշտացնել գիւղացիներին հողեր գնել, երբ որ վերջինները դորա մէջ շատ հարկաւորութիւն ունին, ի հարկէ, իրանց սեպհական հողերի սակաւութեան պատճառով: Բանկը դորա համար վարկ է տալիս իրան դիմող գիւղացիներին ուղղակի փողով: Իսկ այս հարկաւոր դրամը ձեռք բերելու համար գիւղական հողային բանկը դուրս է տալիս տոկոսաբեր թղթեր, որոնց վաճառելը և փողի վերածելը ²⁾ յանձն է առնում պետական բանկը (Государственный банк): Այս տոկոսաբեր թղթերը կոչւում են գիւղացիական հողային բանկի պետական վկայաթղթեր (свидѣтельство), որոնք բաժանւած են երեք մեծութիւնների՝ 100, 500 և 1000 ռուբլու և բերում են տարեկան $5\frac{1}{2}\%$: Պետական բանկը նմանապէս յանձն է առնում վկայաթղթերի շիջուցումն (погашение, amortisation), որը կատարւում է տիրաժների (тиражъ) միջոցով տարէնը մի անգամ վիճակահանութեամբ և միայն այն դումարների համեմատ, որոնք գիւղական բանկում դիզւել են գիւղացիների վճարած շիջական փողերից (сумма погасительныхъ взносовъ) երկու նախընթաց վեցամսեակների ժամանակամիջոցում: Այս գումարների և տոկոսների վճարման և վերադարձման համար ապահովում են գլխաւորապէս գիւղացիների հողերը, որոնք բանկի համար գրաւական են կազմում, և նոյնպէս պետական ընդհանուր միջոցները:

¹⁾ Մենք դիտմամբ ենք գործ ածում գիւղացիական խօսքը, որովհետեւ այդ խօսքը աւելի լաւ է արտապատում լիշած հիմնարկութեան նպատակը, քան եթէ ասէինք՝ գիւղական կամ գիւղացիների բանկ:

²⁾ Տոկոսաբեր թղթերի վաճառման մասին ասում են՝ այդ թղթերը իրականացնել, réaliser, реализовать. իսկ այդ գործողութիւնը կոչւում է реализация, réalisation, իրականացումն:

Գիւղացիական հողային բանկը վարկ է տալիս ամեն դասակարգի գիւղացիներին, այն է՝ բոլոր գիւղական համայնքներին և գիւղական ընկերութիւններին, որոնք բաղկացած պիտի լինին երեքից ոչ պակաս անդամներից։ Սոքա մէկը միւսի համար երաշխաւոր են ստացած գումարների վերադարձման և տոկոսների վճարման վերաբերմամբ։ Վերջապէս վարկը տրոււմ է և առանձին գիւղացիներին։ Հողային վարկը տրոււմ է գիւղացիներին ըստ ցանկութեան $24\frac{1}{2}$ և $34\frac{1}{2}$ տարով։ Գիւղացիները վճարոււմ են բանկին այդ ժամանակամիջոցում տարեկան $3\frac{3}{4}\%$, իսկ բանկի վարչութեան ծախքերը ծածկելու և պահեստի դումար (запасной капитал) կազմելու համար՝ $1\frac{1}{2}\%$ տարեկան։ Բացց փոխառութեան դումարը շիջուցանելու համար (погашение ссуды), որ տւած է $24\frac{1}{2}$ տարով, վճարոււմ է 1% տարեկան, իսկ $34\frac{1}{2}$ տարով տւած գումարների շիջուցման համար՝ $1\frac{1}{2}\%$ տարեկան։

Գիւղացիական բանկի հողային գործունէութեան ամենագլխաւոր կէտերը զծագրելուց յետոյ, հաղորդենք նաեւ այս հիմնարկութեան մի քանի տարւայ գործունէութեան արդիւնքը ցոյց տւող մի քանի հետաքրքրական թւանշաններ։ Յունւարի 1-ին, 1886 թւին, գիւղացիները, մեզ զբաղեցնող գիւղացիական վարկի միջնորդութեամբ, գնել են հողեր 763,241 դեսետին՝ արժողութեամբ 39,700,000 ռուբլու։ Այսքան դեսետինից ուսւաց 7 հարաւային նահանգների վրայ գալիս է 377,000 դեսետին կամ $49,4\%$, արժողութեամբ 23,000,000 ռուբլու կամ 57, 4% ։ Սա անկասկած մի ապացոյց է թէ՛ ո՛րքան անհրաժեշտ է եղել գիւղացիների համար հողային վարկի հիմնարկութիւնը, նամանաւանդ գիւղական հողատիրութեան բաժանման խնդրի տեսակէտից, որ պիտի համարել 19-րդ դարու լուծման ենթակայ տնտեսական-հասարակական ամենագլխաւոր խնդիրներից մէկը։ Ռուսիայում գիւղացիական հողային վարկը ստացել է գործնականապէս այդչափ մեծ նշանակութիւն այն պատճառով, որ գիւղացիների հողը այնտեղ շատ պակաս էր (малоземелье)։ Հիմա թէ մեր Անդրկովկասեան նահանգներում գիւղական հողի սեպհականութիւնը ո՛րքան պակաս է մեր գիւղացիներին և թէ այդ սակաւութիւնը իբրեւ խոչընդոտ է հանդիսանում երկրիս գիւղատնտեսական զարգացման, թէ ոչ—սոքա խնդիրներ են, որոնք իրանց առաջնա-

կարգ նշանակութեամբ առանձին հետադասութեան կարօտ են: Տէրութիւնը, ինչպէս արդէն յայտնի է, վճռել է նաև Անդրկովկասում բանալ գիւղացիական հողային բանկի մի մասնաբաժին, որը պիտի նպատակ ունենայ, վերը յիշած գործունէութեամբ, մեր գիւղական ազգաբնակչութեան հողային պիտոյքների լրացման ծառայելու: Առ այժմ կարելի է ասել, որ բանկը տեղեկութիւններ հաւաքելու ժամանակ այն հողերի մասին, որոնք գիւղացիները ուզում են առնել, պէտք է որոշէ զգուշաբար թէ՛ այն գիւղացիները, որոնք դիմում են բանկի աջակցութեան՝ ի՞նչ դասակարգի են պատկանում: Բանկը սկզբունքով պիտի օգնէ լոկ այն գիւղացիներին, որոնք շատ հարկաւորութիւն ունին հողերի մէջ: Զը նայած այդ սկզբունքին, բանկին դիմող գիւղացիների թւի մէջ կարող են գտնւել և այնպիսիները, որոնք արդէն բաւականաչափ հողեր ունենալով, էլի կը ցանկանան հողեր գնել, որովհետև հողը շատ շահաւէտ գործիք է, երբ որ նա կապալով է տրուում: Պարզ է, որ այսպիսի գիւղացիներին հարուստ կարելի է համարել, որոնք իսկապէս հողագործների միջին դասակարգին են պատկանում: Հողեր գնելուց յետոյ, սոքա կ'աշխատեն իրանց նոյն իսկ նոր հողերը կապալով տալ միւս գիւղացիներին, որոնք հողի կարօտ են, այն էլ վաշխառուական վարկին համապատասխան պայմաններով: Գիւղացիական հողային բանկը պիտի նմանապէս զգուշութիւն գործ դնի իմանալու թէ՛ ո՞վքեր են այն մարդիկ, որոնք գիւղացիներին հողեր են ծախում: Արդե՞օք սոքա խոշոր հողատէրերն են, թէ դարձեալ հարուստ անուանւած համագիւղացիները: Եւ ահա թէ ինչո՞ւ է հարկաւոր այդ զգուշութիւնը: Շատ յաճախակի պատահում է, որ չունեւոր դասակարգի կարօտեալ գիւղացիները իրանց պարտքերը, որոնց մէջ և հարկերն են պարունակուում, վճարելու համար, հարկադրւած են լինում ծախելու իրանց սեպհական հողերը կամ, ևս առաւել, իրանց հողերի որոշ մասերը: Այդ դիպւածներում ներկայանում են հողեր գնելու համար ամենաշտապ կերպով կրկին հարուստ հողագործ գիւղացիները: Եւ որովհետև գիւղացիական հողային բանկի կանոնադրութիւնը դիւրացնում է հողեր գնելու միջոցը ամեն տեսակ գիւղացիների համար, ապա մեր հարուստ գիւղացիները, օգուտ քաղելով բանկի յիշեալ կարգադրութիւնից, կը սկսէին, մեծ օգուտներ

ստանալու նպատակով, շահադիտութեամբ (спекуляция, speculation) ըզբաղել՝ հողերը իրանց խղճուկ համագիւղացիներին առնելով և կրկին շահաւէտ կերպով ծախելով նման խղճուկ գիւղացիներին։ Այսպէս, օրինակ, մեր հարուստ գիւղացին՝ ներկայացնելով բանկի վարչութեան հող ծախողի հետ կապած վաճառման պայմանագիրը, կը ստանար բանկից համեմատ փոխառութիւն, որի գրաւականն է նոր գնած հողը, և այսպէս իր ծախսած կապիտալը ազատելով, կրկին կը դիմէր հողերի նոր շահադիտութեան (Güterschacher կամ Güterspeculation)։ Եթէ գիւղացիական հողային բանկը, որի յարատեւ գործունէութիւնը մեզանում գիւղական հողային սեպհականութեան վիճակը զգալի փոփոխման պիտի ենթարկի, վերը յիշած հանգամանքները ի նկատի չի առնիլ, մենք կարծում ենք, որ բանկը այդ դէպքում անգիտակցաբար նպաստած կը լինի հողերի աւելի ևս մեծ սակաւութեան, հակառակ իր առաջադրած նպատակին։ Այսու ամենայնիւ գիւղական հողային բանկը, օգնելով փոքրիկ և չքաւոր գիւղացիներին հողեր ձեռք բերելու, մասամբ և խիստ հարւած կը տար գիւղական վաշխառական վարկի գոյութեան, որը, ինչպէս յայտնի է, գիւղացիներին ամենուրեք մեծ չքաւորութեան մէջ է զգում։ Քանի որ գիւղացիական հողային վարկը օրէնքով կանոնաւորւած չէ մի որ և իցէ երկրում, գիւղացիները, հողի կարօտութիւն քաշելով, ստիպւած են լինում հարուստ գիւղացիներին կամ վաճառական հողատէրերին հողեր վերցնել կապալով։ Ասպալառու գիւղացիները կապալի համար, ըստ պայմանի, կանխաւ յայտնի գումար են վճարում, որ նոքա սովորաբար պատրաստի չունին։ Գիւղացիները այս դէպքում ճարահատեալ նմանապէս կապալով են տալիս իրանց հողերը համագիւղացիներին շատ աժան գնով, օրինակ՝ ղեսեատինը 8 բուբլով, փոխանակ 11 բուբլու, որ կարելի կը լինէր ստանալ, եթէ հողը կամաւոր և ոչ ստիպողական կերպով կապալով տրւէր։ Գիւղացիները իրանց ստացած փողը վճարում են հողատէրերին և կապում են վերջինների հետ մի պայման, որի զօրութեամբ նոքա կապալի ֆինացած փողը վերջնականապէս պիտի վճարեն ցորենը հասնելուն պէս։ Երբ որ հունձը վերջանում է, գիւղացիները իրանց զառն աշխատանքով հաւաքած հացը հարկադրւած թողնում են հողատիրոջ արտերում, որովհետեւ՝ չը նայած պայմանագրին՝ գիւղացիները

կրկին չունին փող կապալի մնացածը վճարելու համար. այնպէս որ, հացը արտերում շատ մնալուց յետոյ, վերջապէս փչանում և կորչում է: Պատահում է և այնպիսի դէպք, երբ հողատէրերը պահանջում են կապալառու գիւղացիներից հնձած հացը մաս առ մաս վերցնել արտերից և այն ժամանակ իրանց պարտքն էլ մաս առ մաս վճարել: Գիւղացիները հողատիրոջ յիշեալ կարգադրութեան հետ, ի հարկէ, մասամբ համաձայնում են և իրանց հացը շուտով ծախելու են տանում, որպէս զի ստացած փողերով իրանց պարտքը ըստ կարելոյն կանոնաւոր կերպով վճարեն: Այս հանգամանքը այն տխրալի և յուսահատիչ հետևանքն է ունենում, որ տեղալին շուկաների վրայ միանգամից շատ հաց է հաւաքւում, այնպէս որ վերջինի գինը չափազանց վայր է ընկնում: Հացի պուղը, որը, օրինակ, ծախւում էր 60—70 կոպէկով, գիւղացիները ստիպւած ծախւում են 36—40 կոպէկով: Եթէ հաշւէինք այս կորուստի տոկոսը 33% և գումարէինք սորան այն կորուստի տոկոսների հետ, որ կրում են գիւղացիները իրանց հողերը կապալով տալով, մենք կը ստանայինք մօտ 40%, որ նպտում է գիւղացիներին այդ զարհուրելի վաշխառուական վարկը: Ահա՛, ուրեմն, մի կողմից այս կործանիչ վարկի վերացման նպատակու համար է, որ տէրութիւնը հիմնում է գիւղացիական հողալին վարկի հաստատութիւնը նաև մեր երկրում: — Մաղթելով, որ այս տէրունական ձեռնարկութիւնը իրագործւի և իր նպատակներին հեշտութեամբ հասնել կարողանայ, մենք պիտի մատնացոյց անենք այն ծանրակշիռ խնդրի վրայ, որը անշուշտ նմանապէս մեծ ուշադրութեան արժանի է: Բացի գիւղացիական հողալին բանկից, որը նպատակ պիտի ունենայ մեր գիւղացիների երկար-ժամանակեայ վարկի (долго-срочный кредитъ, crédit à longue terme) կարիքը լրացնելու, հարկաւոր կը լինի հողալ և կարճ-ժամանակեայ վարկի (кратко-срочный кредитъ, crédit à court terme) մասին, որի կարևորութիւնը ահագին է մեր գիւղական կեանքում, բայց որը, որպէս և շատ ու շատ ուրիշ կարևոր խնդիրներ մեր պարբերական մամուլը ցայժմ, կարող ենք համարձակ ասել, յանցաւոր լուութեան է մատնած, թէպէտ և համոզւած ենք միւս կողմից, որ այդ անհոգութիւնը ոչ չարութիւնից, այլ մեր հրապարակախօսների անձեռն-հասութիւնիցն է: Գիւղացիների համար ծագում են տարւայ ըն-

Թացքում պիտոյքներ, որոնց համար դրամական օժանդակութիւն է պահանջուում: Գիւղացիները ունին սերմեր գնելու և տնտեսութեան հետ կապուած ուրիշ ծախսեր, բայց մանաւանդ հարկեր վճարելու պարտականութիւն: Եւ որպէս զի այս դէպքերումն էլ գիւղացիները չ'ընկնեն վաշխառուների ձեռքը, ինչպէս դժբաղդաբար այժմս լինում է, հարկաւոր է նմանապէս վերը ցիշած փոխատու-խնայողական ընկերութիւնների նման վարկային հաստատութիւններ, որոնց մասին մենք մի ուրիշ յօդուածում մանրամասնաբար կը խօսենք: Նաև այդ կողմից Ռուսիայի փորձը կարող է մեզ մի յայտնի չափով ղեկավար լինել: Իրողութիւնը սա է, որ գիւղացիական հողային բանկի հիմնարկութեան հետ զուգընթացաբար հիմնուում էին գիւղական բանկեր փոքրիկ, կարճ-ժամանակեայ վարկի կարօտութիւնը լրացնելու համար. բանկեր, որոնց կարևորութիւնը պաշտօնապէս ճանաչեց տէրութիւնից. դորա ծնունդն էր 1883 թ. տաւած օրէնքը՝ գիւղական բանկերի մասին (положение о сельских банках): Հէնց այդ գիւղական կոչուած բանկերն են, որ պէտք է գիւղացիների կարճ-ժամանակեայ վարկի կարօտութեան բաւականութիւն տան: Ամեն կերպ պէտք է ցանկալ և յուսալ, որ գիւղացիական հողային բանկի ճիւղը Դովկասում բացւելուց յետոյ, երկար չը պիտի սպասենք, որ բացւեն մեզ մօտ նաև գիւղական բանկեր: Առաջինը, որպէս տեսանք, պիտի տայ երկօր-ժամանակեայ վարկ, որով միայն գիւղացին հող կարող է գնել, երկրորդ տեսակի բանկերը պիտի հալթհալթեն գիւղացիներին կարճ-ժամանակեայ վարկ, որը հարկաւոր է անձնական գիւղատնտեսական պիտոյքները լրացնելու համար: